

## ՕՐ. ԱՐ. Վ. -ին

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Երբոր բացւելիս է եղել արփին,  
Սարերի լանջում՝ կամ թէ քարափին,  
Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել.  
Առաջին շողը դեռ ինձ է դիտել.  
Եւ ես ծանօթ եմ այն հրաշալի  
Գոյն ու ձեւերին արևագովի,  
Որ այնքան շըքեղ մեզ ցոյց են տալիս  
Երկինք ու երկիր քնից արթնելիս

Բայց քեզ տեսնելուց օրեր անցկացած  
Երբոր վերստին տեսայ լուսաբաց  
Հասկացայ գաղտնի կապերը բնութեան, —  
Բացւում էր պայծառ առաւօտն ամրան,  
Եւ ցոլանալով շաղախւում էին  
Վաղ արշալուսի շողերն առաջին  
Զինջ կապուտակին անամակ երկնքի,  
Որ դիշերային քողը իւր դէմքի —  
Թեթև մշուշը դեռ արևմուռքում  
Խսպառ վայր ձգել չ'ը համարձակւում,  
Մինչ առաւօտեան լոյսի երերուն  
Փապաւէնները խացտալով սիրուն

Երկնային ծովի կապուտակ ծոցում  
Հեռոն և հեռու էին տարածում։  
Եւ մի կեանք, ասես, նուրբ ու սիրազեղ  
Մանօթ ակնարկով խաղում էր այնտեղ.  
Մանօթ էր թւում կապոյտն երկնքի  
Եւ ծիծղուն շողը անտես արեգի...:

Եւ ես ցիշեցի սրտի թնդիւնով  
Աչքերը կապոյտ, նոյնպիսի գոյնով,  
Նրանց ժպիտը գւարթ, կուսական,  
Որ արշալուսին նման է այնքան.  
Տեսայ երկուսն էլ, մի բան են պատմում,  
Երկուսն էլ տեսայ արե են բերում,  
Մէկը լոյսի,  
Միւսը յոյսի։